«ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ ԻՐ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ»

Վերջերս Ս. Ղազարի տպարանեն լույս տեսավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Հ. Ս. Անասյանի՝ վերի խորագրով շահեկան աշխատությունը՝ արտատպված Վենետիկի «Բազմավեպ» ամսագրի 1968 թ. «Բացառիկեն»։ Կարելի է անվարան ըսել, թե բազմահմուտ բանասերը մանրազնին կերպով կատարած է իր հետազոտությունները և հաջողած է ի հայտ բերել Վարդան Այգեկցիին կարգ մը գրությունները, որոնք ցարդ անծանոթ մնացած էին։ Այդ նյութերով առաջին անգամ ըլլալով կհայտնվի, որ Կիլիկիայի շրջանի մեր այս խոհուն և հայրենասեր մատենագիրը իր գրչով կապված էր նաև իր ժամանակի՝ ԺԲ—ԺԳ դարերու դավանաբանական բուռն վեճերուն, հայ եկեղեցին պաշտպանելու նպատակով։

Ինչպես հայտնի է, անվանի հայագետ Ն. Մառի ուսումնասիրությանց շնորհիվ է, որ Վարդան Այգեկցին ճանչցվեցավ որպես հեղինակ առակներու, իրատական ճառերու, բարոյախոսական քարոզներու, թուղթերու և աղոթքներու։ Հիշյալ գիտնականին խմբագրությամբ կազմվեցավ Վարդանի «Գիրք Առակացը» կամ ժողովածուն։ Այս բազմազան նյութը մինչև ԺԹ դ. շատ սիրելի էր եղած ընթերցողներուն համար, առ հասարակ, և հետևաբար լայն տարածում գտած։

Վարդան խոսելով իր մասին կհայտնե, թե ծնած է Տլուք կոչված գավառի Մարաթա անունով վայրը։ Տլուք կգտնվեր Այնթապի շրջանակին մեջ։ Իր ուսումը ստացած էր Սիսի մերձակա Արքակաղին վանքում, որուն եղբայրության անդամներեն եղած է, հավանաբար, իբրև կրոնավոր։ Մեզի անհայտ՝ գուցե հարկեցուցիչ պարագաներու բերումով Վարդան կստիպվի ձգել իր ընիկ գավառն ու երթալ հաստատվիլ Այգեկի անապատը, որ կգտնվեր Տավրոսյան լեռներուն մաս կազմող Սյավ լեռան վրա (տեղը հայտնի չէ)։

Հիշատակարանե մը կերևի, որ այս տեղափոխությունը կատարված է 1210-ին և այնուհետև մեր հեղինակը ապրած ու արտադրած է այնտեղ մինչև կյանքին վերջը, ուստի կոչված Այգեկցի։ Վարդանի վերոհիշյալ՝ մեզ ծանոթ գրական գործերը այդ թվականեն է, որ կսկսին։ Բայց ահա հայտնություն մը մեզ կհաղորդե Հ. Անասյան՝ ըսելով. «Ըստ այսմ Վարդան Այգեկցու գրական գործունեությունը մեզ հայտնի էր սկսած միայն 1210-ական թվականներից, Այգեկի անապատից։ Սակայն մեր ընթացիկ աշխատանքների ընթացքում մեզ հայտնի դարձան Վարդան Այգեկցուն պատկանող մի քանի նոր գործեր, որոնք լույս են սփռում նրա կյանքի և գործունեության մութ մնացած կետերի և գլխավորապես նախայգեկյան շրջանի վրա»։ Այդ գործերը ամփոփված են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանը պահված ձեռագիրներու մեջ։

Վարդանի նորահայտ երկերուն մեջ իր բացառիկ արժեքով ու ծավալով ուշադրություն գրավողն ամենեն ավելի անոր «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ», կամ կրճատ՝ «Արմատ հաւատոյ», խորագիրը կրող ժողովածուն է, որուն ձեռագիր օրինակներն ուսումնասիրելով ու խմբավորելով, բանասեր Անասյանը որոշած է երկու հիմնական խումբեր՝ ընդարձակ խմբագրություն և համառոտ խմբագրություն։ «Արմատ հաւատոյն» կպարունակե հայ եկեղեցվո դավանանքի վրա հիմնված հակաճառություններ՝ «ընդդէմ երկարնակաց և ամենայն հերձուածողաց» և իր կառուցվածքով նրման է Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» և «Կնիր հաւատոյ» ժողովածուներուն։

Ինչպես դիտենք պատմությենեն՝ Ե դարու կեսեն սկսած հայոց և բյուզանդացվոց ու նաև հռոմեական եկեղեցվո մեջ բուռնում հառաջ եկավ դավանական խնդիրներու շուրջ, հզորներուն կողմե կրոնական և անկե բխելով բարդական ազդեցություն ձեռք բերելու ձգտումով։ Ձենք սխալիր ըսելով Ձն այդ էր բուն շարժառիթը։

Նույն երևույթը, ավելի շեշտված աստիճանի, կգտնենք Կիլիկյան Հայաստանի մեջ ԺԲ—ԺԴ դդ. ընթացքին, եկեղեցիներու միություն դոյացնելու պատրվակին ներքև։ «Ահա այսպիսի մի ժամանակաշրջանում է,— կրսե Անասյան,—

որ հանդես էր գալիս Վարդան Այգեկցին՝ գրչով պայքարելու կրոնական «տարամիտությունների դեմ, ի պաշտպանություն հայ-քրիստոնեական դարավոր ավանդությունների»։

Բարձր և ազնիվ մտածումներով միայն կառաջնորդվեր Այգեկցին՝ պայքարելով չարիքին դեմ։ Մտադրության արժանի են, իրապես, Անասյանի հետևյալ տողերը. «Վարդան Այգեկցու նպատակը քննադատել չէ մյուս եկեղեցիների դավանանքը կամ կարգերը, այլ միայն ապացուցել, որ հայ եկեղեցու ավանդությունները պատմականորեն վավերական աղբյուրներից են գալիս, այսինքն այն շրջանից, երբ դեռ «չկայր բաժանումն, և չէր սատանայ ցանեալ զորոմն հերձուածոյն ի վերայ բարի սերմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ կայր յեկեղեցին», այսինքն առաջին երեք տիեզերական ժողովների շրջանից»։

Դավանանքի վերաբերյալ վեճի հարցերը բավական մոտեն շոշափած է Անասյան, ավելի հստակ պատկերը տալու համար Այգեկցիի գործունեության՝ այդ ճակատի վրա։ Այս կապակցությամբ մեջբերումներ եղած են Վարդանի ճառերեն, հորդորներեն և քննադատություններեն՝ առնելով դանադան ձեռագիրներեն։ Մեկ գլխավոր նպատակի կձգտեին Այգեկցիին և այլ ողջախոհ և ազդասեր հայոց ջանքերը, այն է՝ պաշտպանել հայ եկեղեցվո ուղղափառությունը, հերքել օտարոտի դավանությունները և հեռու պահել մեր ադետներն ու երկմիտները, ինչպես և շահադետները, քաղկեդոնականության թակարդներեն, որոնք կրնային վտանգ սպառնալ նույն իսկ մեր ազգային անկախության։ Միաժամանակ Վարդան հայրաբար կհորդորեր իր հոգևոր որդիներուն՝ Տլուքի ոչ միայն հայ, այլև հույն և ասորի բնակիչներուն, «վերջ տալ կրոնական փոխադարձ վեճերին, այլ խոսքով՝ աղանդիչյան խռովություններին»։

Անդրադառնալով «Արմատ հաւատոյ» ժողովածուին, Անասյան կընդգծե անոր կարևորությունը իր բովանդակությամբ և լուծյամբ «որպես պատվար քաղկեդոնական շարժման դեմ ԺԳ դարի սկզբին, երբ «սիրողք բաժանմանց աշխատում էին երկփեղկել հայ եկեղեցին...»։ Այս շրջանին մղված քաղկեդոնական պայքարներուն՝ Վարդանի կազմած ժողովածուն «որպես վենք միշտ մնաց իր դիրքերի վրա»։ Այդ մասին բերված են փաստական կարևոր տվյալներ։

Այգեկի խաղաղ անկյունը կայան դտնելե առաջ, ահա, կդտնենք Մարաթայի Վարդանը հանդես եկած «որպես հակաքաղկեդոնական պայքարի եռանդուն գործիչ ու կազմակերպիչ»։ Վստահաբար ինքը շատ կարևոր դեր ունեցավ հայ եկեղեցվո ինքնուրույնությունը պահելու հաջողության մեջ։ Անոր կազմակերպած շարժումը պայքար էր հայության ազգային դիմագծի պահպանման համար։

Ահա այսպես՝ Հ. Ս. Անասյանի հայտնաբերած երկերովը Վարդան Այգեկցին կներկայանա մեզ իր նոր դեմքով, ոչ միայն որպես հեղինակը առակներու, խրատներու, քարոզներու և աղոթքներու, այլ և անվեհեր ախոյանը հայ ազգային բազմադարյան եկեղեցիին։ Կպարզվին նաև Վարդանի կենսագրության համար նորություններ. օրինակ՝ թե նա իր ժամանակակիցներուն ծանոթ եղած է Ռեճիկ և Կիլիկեցի մականուններով, թե նա եղած է Սկևռա վանքի առաջնորդ և Լամբրոնի արքեպիսկոպոս և այդ հանդամանքով մասնակցած է Լևոն Բ-ի թագադրության հանդեսին 1198 թ.։ Ուշագրավ է նաև, որ Անասյանը վերոհիշյալ պայքարի ոլորտներուն մեջ է, որ կգտնե լուսաբանությունը այն հալածանքին, որու հետևանքով Այգեկցին հարկադրված էր փախուստ տալ Մարաթայեն և որու համար ցարդ հայ բանասիրությունը որևէ բանավոր պատճառ չէր կարողացած ցույց տալ։ Նախ մեկ կողմե ցույց տալով, որ Այգեկցիին գլխավորած հակաքաղկեդոնական պայքարը փաստորեն ուղղված էր նաև Ասորիքի և Միջագետքի հայերուն մեջ տարածվող ասորական ազդեցության դեմ, քանի որ ասորական հակոբիկյան եկեղեցին իր ծեսերու ինչ-ինչ կետերով կմոտենար քաղկեդոնական եկեղեցիներուն, և մյուս կողմեն ճշտելով, որ Այգեկցիի հալածումը տեղի ունեցած էր 1205—1209 տարիներու ընթացքին, Անասյան իր կարծիքը կձևակերպե հետևյալ տողերով. «Ըստ երևույթին՝ Այգեկցին Մարաթայում, իր բնիկ ժառանգության սահմաններում և շրջաններում, օգտագործելով հայ եկեղեցու հոգևոր պաշտոնյա լինելու հեղինակավոր հանդամանքը, եռանդուն աշխատանք էր ծավալել իր գաղափարների տարածման համար, որի հետևանքով էլ, հավանաբար, անհանդուրժելի համարվելով իշխող տարրերի կողմից, հալածվել էր ոչ թե լոկ իր բնիկ ժառանգությունից, այլ և ամբողջ շրջանից՝ «ի յերկրէն Կիւրիսոյ և ի գաւառէն Տլքոյ»։ Պետք է նկատի ունենալ, որ ամենից առաջ իշխող տարրերն են ենթարկվում միջավայրի ազդեցությանը՝ առաջնորդվելով իրենց շահերից, իսկ «Արմատ հաւատոյով» ծավալվող պայքարն իր շատ կողմերով վերաբերում էր նաև, ինչպես տեսանք վերևում, հայ-ասորական միջավայրին և ըստ ինքյան ուղղված էր նաև այնտեղ տիրող ասորական ազդեցության դեմ, հետևաբար նաև՝ այդ միջավայրում դիրքեր ունեցող հայ տարրերի շահերի դեմ։ Այս հարցի այսպիսի լուծումը

հավանաբար կհաստատեն հետագա հետազոտությունները՝ երբ կհայտնաբերվեն նոր նյութեր։

Վարդան Այգեկցիի նորահայտ երկերը. Հ. Ս. Անասյանի ուսումնասիրություններով ներկայացված, արժանի են մասնագետների ուշադրության։ Վաստակավոր բանասերն, արդարև, գնահատելի աշխատանք է կատարած՝ լույս ընծայելով դարեր ամբողջ մութի մեջ մնացած պատմական իրադարձությունները։ Գիտունին պահանջված զգուշությամբ ու քննական թափանցումով ան գիտե մոտենալ իր ուսումնասիրությանց, ինչպես կվկայեն իր ցայժմ հրատարակած բոլոր արժեքավոր գործերը։

Նյու-Յորք

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐՅԱՔՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական նստաշրջանը, որը ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների մեկ տարվա կատարած աշխատանքների յուրատեսակ ամփոփումն էր։ Նստաշրջանը ցույց տվեց ոչ միայն երիտասարդ գիտաշխատողների հետաքրքրությունների լայն շրջանակը, այլև այն մեծ աշխատանքը, որ կատարվում է նորաստեղծ ինստիտուտում։ Լսվեցին մի շարք զեկուցումներ։

Պատմական մատերիալիզմի բաժնի կրտսեր գիտաշխատող Կ. Սարինգուլյանի՝ «Բարոյականությունը իբրև սոցիալական ֆենոմեն» հաղորդումը նվիրված էր բարոյական ղեկավարման էության ու միջոցների տարբերմանը սոցիալական ղեկավարման այլ ձևերից։ Նշվեց, որ բարոյականության յուրահատկությունը բնորոշող առավել կարևոր գործոնը անհատական բարոյագիտակցության անձնավորական բնույթն է։

Պատմական գիտության ժամանակակից կարևոր փիլիսոփայական հարցերին էր նվիրված է. Մելքոնյանի՝ «Պատմության համեմատական ուսումնասիրության վիճելի որոշ պրոբլեմների մասին» հաղորդումը։ Ժամանակակից պատմական գիտության կարևորագույն խնդիրներից մեկը համարելով պատմական իրականության կոմպլեքսային ընդհանրացումն ու ուսումնասիրությունը, զեկուցողը լուծման բանալին տեսնում է սոցիալ-պատմական սիստեմների համեմատական ուսումնասիրության մեջ, որը կբացահայտեր նրանց ընդհանուր և տարբերակող կողմերը, դրանով իսկ պատմա-համեմատական մեթոդը կարևոր շատ հարցեր կարող է պարզել և նպաստել գիտության զարգացմանն ու առաջընթացին։

«Աշխատանքի և օտարման հասկացությունները Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիայում»» հաղորդումը նույն բաժնի աշխատակից Վ. Պողոսյանի երկարամյա ուսումնասիրության արդյունքն է։ Նա վեր է լուծել Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիայում» առաջ քաշված աշխատանքի և օտարման հասկացությունները և անում ուշագրավ հետևություններ։

Կոնկրետ սոցիալական ուսումնասիրությունների բաժնի աշխատակից Ա. Թադևոսյանի զեկուցումը նվիրված էր սոցիոլոգիայում սանդղակային մեթոդների կիրառման հարցերին։ Նա նշեց, որ ժամանակակից գիտության զարգացման ամենաբնորոշ գծերից մեկը գիտելիքների բոլոր բնագավառների մաթեմատիկականացումն է, որի կիրառման ոլորտը տարածվում է նաև սոցիալական ուսումնասիրությունների վրա։ Զեկուցողը նշեց, որ չափման տեսության առավել տարածված եղանակներից մեկը սոցիոլոգիական վիճակագրությունն է և որ այդ եղանակի թերությունները արտահայտվում են որակական փաստերը քանակական տեսքի բերելու անընգենցի ողջ բովանդակության անբավարարության մեջ։

Դիալեկտիկական մատերիալիզմի բաժնի կրտսեր գիտաշխատող Ս. Մանասյանի՝ «Գիտելիքի զարգացման հարցի շուրջը» հաղորդումը նվիրված էր գիտելիքի զարգացման ինտուիտիվ ըմբռնման սահմանափակության, գիտելիքների զարգացման ազդակների խնդրին։ Խոսելով գիտելիքի զարգացման ազդակների մասին, նա նախ տարբերակում է ներքին և արտաքին ազդակները և ապա բացատրում գիտելիքի զարգացման հիմնական ըմբռնումները, դրանց ներքին օրինաչափությունները, որոնց շրջանակներում իրականանում է գիտելիքի խորացումը, ճշգրտումը և քանակական աճը։

Ս. Սարգսյանի հաղորդումը նվիրված էր «Պրոբլեմային սիտուացիայի տեղը ստեղծագործական մտածողության մեջ» թեմային։ Խոսելով մարդկային կենսագործունեության ընթացքում պահանջմունքների, նպատակների ու դրանց հասնելու միջոցների միջև առաջացած